ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"4" հունիսի 2012թ № 68 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳՈՐԻՍ-ԽՆԱԾԱԽ-ՎԱՂԱՏՈՒՐ-ԽՈԶՆԱՎԱՐ», «ԳՈՐԻՍ-ԽՆՁՈՐԵՍԿ-Ն.ԽՆՁՈՐԵՍԿ» ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար», «Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ» ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 31-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունները՝ համաձայն հավելվածի:

2.Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հունիսի 4
ք. Կապան

Արձանագրություն N1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի

ք.Կապան 2012թ. հունիսի 4-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Դոլունց, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով 5 անդամներ՝ Ա.Դոլունցը, Ա.Ուստաբաշյանը,Ս.Աղաբեկյանը,Կ.Կոզմանովը,Ս.Արզումանյանը

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2012 թվականի մայիսի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2012 թվականի մայիսի 31-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցի ներկայացրած հայտը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը, մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1.Հաղթող ճանաչել «Շահ-Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ներմարզային «Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար», «Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ» երթուղիներում.

1.1 «Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար»

ավտոմեքենայի մակնիշը՝ «ԳԱԶ322132-22», պետհամարանիշը՝ 3183Լ

1.2 «Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ»

ավտոմեքենայի մակնիշը՝ «ԳԱԶ32213», պետհամարանիշը՝ 524SU54

Սույն որոշումն ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ Ա.Դոլունց

անդամներ Ա.Ուստաբաշյան

Ս. Աղաբեկյան

Կ.Կոզմանով

Ս. Արզումանյան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012 թ. N որոշման

Ա ր ձ ա ն ա գ ր ու թ յ ու ն

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

ք. Կապան

2012թ. մայիսի 31 ժ 15-00

ՀՀ Սյունիքի մարզպետի 2010թ. ապրիլի 28-ի N 31 որոշմամբ հաստատված մրցութային հանձնաժողովի կազմը՝ նախագահ՝ Ա.Դոլունց - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Ա. Ուստաբաշյան – քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան - քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, Կ. Կոզմանով-իրավաբանական բաժնի պետ, Ս. Արզումանյան - ՀՀ տրանսպորտային տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ,:

Քննարկեցին 2012 թվականի մայիսի 31-ին կայացած «Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար»,«Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ» երթուղիներում մրցույթի արդյունքները:

«Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար», «Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ» ներմարզային երթուղիներում հայտ էր ներկայացրել <<Շահ-Նան>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Գորիս, Գ.Նժդեհի, 47):

Մրցութային հանձնաժողովը «Գորիս-Խնածախ-Վաղատուր-Խոզնավար», «Գորիս-Խնձորեսկ-Ն.Խնձորեսկ» ներմարզային երթուղիների մրցույթի արդյունքում կայացրած քվեարկությամբ (կողմ-5, դեմ 0,ձեռնպահ-0) հաղթող ճանաչեց <<Շահ-Նան>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը :

Արձանագրության արդյունքները երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին համապատասխան իրավական ակտ ընդունելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Դոլունց**

անդամներ **Ա.Ուստաբաշյան**

Ս.Աղաբեկյան

Կ.Կոզմանով

Ս.Արզումանյան